ՍՄԿԿ XIX ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

Գ. Մ. ԱՅՎԱԶՅԱՆ

Մեր կուսակցության կյանքում ուրույն տեղ ունեն կոնֆերանսները, որոնք ներքին ու արտաքին քաղաքականության հասունացած հարցերի համակողմանի քննարկման արդյունավետ ձևեր են։ Կուսակցության ստեղծումից ի վեր տեղի է ունեցել 19 կոնֆերանս՝ 7-ը մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, 12-ը՝ սովետական շրջանում։ Դրանցից յուրաքանչյուրն իր հետքն է թողել, իսկ մի քանիսը պատմության մեջ են մտել որպես կարևոր ուղենիշներ։ Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին հրավիրվեց XVIII կոնֆերանսը, որը քննարկեց երկրի պաշտպանունակության ամրապնդման հարցերը։ Դրանից հետո, դրեթե 50 տարի կուսակցական համամիութենական կոնֆերանսներ չէին հրավիրվում։ Խախտվել էին լենինյան ավանդույթները։

Կուսակցության պատմության մեջ խոշոր իրադարձություն է XIX համամիութենական կոնֆերանսը, որը տեղի ունեցավ 1988 թ. հունիսի 28-ից—հուլիսի 1-ը։ Կոնֆերանսը դումարվեց վերակառուցման բեկումնային փուլում։ Այն պետք է պատասխան տար մեր կյանքի համար կենսականորեն կարևոր հարցերի. որո՞նք են վերակառուցման առաջին արդյունքները, ի՞նչ է հարկավոր դրա ճանապարհին կանգնած խոչընդոտները վերացնելու համար, ինչպե՞ս անշրջելի դարձնել հեղափոխական նորացման պրոցեսը։

Կոնֆերանսի կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ վավերացվեց և ավելի ամրապնդվեց հրապարակայնության ու դեմոկրատիայի զարգացումը, որի սկիզբը դրվեց երեք տարի առաջ։ Հայտնի է, որ կոնֆերանսից առաջ հրապարակվեցին ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսները, որոնք ըստ էության դարձան բանավեճի պլատֆորմ։ Դրանով իսկ վերականգնվեց լենինյան ավանդույթը՝ կարևորագույն հարցերի շուրջ խորհրդակցել կուսակցության, ժողովրդի հետ։ Թեզիսները քննարկվեցին նախ ՍՄԿԿ Կենտկոմի պլենումում, այնուհետև՝ կուսակցական կազմակերպություններում, մամուլի էջերում, հեռուստատեսության ու ռադիոյի միջոցով։ Միայն Մոսկվայի կուսակցական կազմակերպություններում, աշխատավորական կոլեկտիվներում արվել է ավելի քան 130 հազար առաջարկություն և լրացում[1]։ Բանավեճի ընթացքում կոմունիստները և անկուսակցականներն արեցին կոնստրուկտիվ բազմաթիվ առաջարկություններ և քննադատական դիտողություններ, որոնք նպատակամղված էին վերակառուցման խորացմանը։ Դրանցից շատերը կոնֆերանսի ընդունած բանաձևերում հաշվի առնվեցին։

Բանավեճի ոգին պահպանվեց նաև կոնֆերանսի ընթացքում։ Հարցերի քննարկումն անցավ քննադատության, բացախոսության պայմաններում։ Դրեթե վեց տասնամյակ նման բան չէր եղել։ Մտքերի փոխանակությանը մասնակցելու համար ցուցակագրվածների թիվը կազմում էր մոտ 300։ Ի դեպ, բոլորը չէ, որ հնարավորություն ունեցան ելույթ ունենալ։ Այդ բացը որոշ չափով լրացվեց խմբագրական հանձնաժողովների նիստերում։ Բավական է նըշել, որ այնտեղ արտահայտվել է մոտ 150 մարդ[2]։ Կոնֆերանսը քննարկեց երկու հարց. 1. կուսակցության XXVII համագումարի որոշումների կատարման ընթացքը, 12-րդ հնգամյակի առաջին կեսի հիմնական արդյունքները և կուսակցական կազմակերպությունների խնդիրները վերակառուցման պրո-

---

[1] «Правда», 30. VI. 1988.

[2] «Սովետական Հայաստան», 3. VII. 1988։

գեսի խորացման ուղղությամբ. 2. կուսակցության ու հասարակության կյանքի հետագա դեմոկրատացման միջոցառումներ։ Այս հարցերի մասին ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի՝ «ՍՄԿԿ XXVII համագումարի որոշումների կատարման ընթացքի և վերակառուցման խորացման խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ Մ. Ս. Գորբաչովը։

Կոնֆերանսի գլխավոր հարցը հասարակության համապարփակ դեմոկրատացումն ու վերակառուցման ընդլայնումն էր։ Այս հարցերի վերաբերյալ կոնֆերանսն ընդունեց մի շարք բանաձևեր. «ՍՄԿԿ XXVII համագումարի որոշումների կատարման ընթացքի և վերակառուցման խորացման խնդիրների մասին», «Սովետական հասարակության դեմոկրատացման և քաղաքական սիստեմի ռեֆորմի մասին», «Հրապարակայնության մասին», «Ազգամիջյան հարաբերությունների մասին», «Բյուրոկրատիզմի դեմ պայքարի մասին», «Իրավական ռեֆորմի մասին», «Երկրի քաղաքական սիստեմի ռեֆորմի գործնական իրականացման որոշ անհետաձգելի միջոցառումների մասին»։ Ինչպես երևում է հարցերի պարզ թվարկումից, կոնֆերանսի որոշումները վերաբերում են վերակառուցման խորացմանը, քաղաքական սիստեմի ռեֆորմին, կուսակցության ու հասարակության դեմոկրատացմանը։ Դրանք լայն հնարավորություն են բացում ընթանալու հեղափոխական նորացման ուղիով, ամրապնդելու կուսակցության դերը որպես քաղաքական ավանգարդի։

Կոնֆերանսն ամենից առաջ ամփոփեց 12-րդ հնգամյակի առաջին կեսի արդյունքները։ Այստեղ գլխավորն այն է, որ կասեցված է երկրի սահքը դեպի տնտեսական ու սոցիալ-քաղաքական ճգնաժամ։ Դրական տեղաշարժեր են կատարվում էկոնոմիկայի բնագավառում։ Սկսվել է ժողովրդական տնտեսության կառավարման համակարգի արմատական ռեֆորմը, ներդրվում են լրիվ տնտհաշվարկի և ինքնաֆինանսավորման սկզբունքները։ Օրենքներ են ընդունվել պետական ձեռնարկության և ՍՍՀՄ կոոպերացիայի մասին, էկոնոմիկայի մեջ ստեղծվում է կոոպերատիվ խոշոր հատված, ծավալվում է անհատական աշխատանքային գործունեությունը։ Սկսվել է էկոնոմիկայի առողջացման պրոցեսը։ Ահա որոշ տվյալներ։ Անցյալ տարի ազգային եկամտի ամբողջ աճն առաջին անգամ ստացվեց աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին։ Հնգամյակի երկու տարում բնակչության մեկ շնչի հաշվով ռեալ եկամուտներն աճել են 4,6%-ով։ Նախորդ հնգամյակի համեմատությամբ բնակարանների ամենամյա գործարկումն ավելացել է 15 միլիոն քառակուսի մետրով[3]։ Սոցիալ-տնտեսական իրավիճակի առողջացման միտումը շարունակվում է նաև այս տարի։

Այս ամենը, իհարկե, լավ է, բայց մեզ բավարարել չի կարող։ Ինչպես ընդգծվեց կոնֆերանսում, էկոնոմիկայի վիճակը դանդաղ է փոխվում։ Վերակառուցման պրոցեսներն ընթանում են հակասականորեն, բարդությամբ, դժվարությամբ, հնի ու նորի հակամարտությամբ։ Չնայած ձեռք բերված առաջին արդյունքներին, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացման մեջ արմատական բեկում տեղի չի ունեցել։ Էկոնոմիկան մեծապես շարունակում է զարգանալ էքստենսիվ ուղիով, նրա կառուցվածքը հիմնականում պահպանում է ծախքային բնույթը։ Դանդաղ է ծավալվում գիտատեխնիկական առաջադիմությունը, չի կատարվում ազգային եկամտի ավելացման ելքանը, չկա արտադրանքի որակի նկատելի բարելավում, բարդ է երկրի ֆինանսական դրությունը։ Պահպանվում է լարվածությունը պարենամթերքի և սպառման ապրանքների արտադրության ու մատակարարման գործում, դարձյալ սուր է մնում բնակարանային պրոբլեմը։

Այս խնդիրների լուծումը, ինչ խոսք, կպահանջի ժամանակ, մեծ ջանքեր և, իհարկե, համապատասխան միջոցներ։ Կուսակցական համաժողովն անհրաժեշտ համարեց լուծվող խնդիրների ընդհանուր շղթայից առանձնացնել

---

3 Նույն տեղում, 29. VI. 1988։

ժողովրդի բարեկեցության բարձրացման այն անհետաձգելի պրոբլեմները, որոնք պետք է իրագործվեն առանց դանդաղելու։ Խոսքը վերաբերում է առաջին հերթին պարենային պրոբլեմին, որը, թերևս, ամենացավագին տեղն է հասարակության կյանքում։ Կոնֆերանսում նշվեց, որ մենք չունենք ո՛չ բարոյական, ոչ էլ քաղաքական իրավունք՝ հաշտվելու պարենային պրոբլեմի ձգձգվող լուծման հետ։ Ժողովրդի բարեկեցության բարձրացումը պահանջում է նաև արագացնել շուկայի հագեցումը բաղմաղան ու բազմատեսակ ապրանքներով, ըստ ամենայնի ավելացնել ժողովրդական սպառման ապրանքների թողարկումը։ Կոնֆերանսը հավանություն տվեց այն միջոցառումներին, որոնց նպատակն է կտրուկ մեծացնել բնակարանային շինարարությունը, այն հաշվով, որ մինչև 2000 թվականը յուրաքանչյուր ընտանիք ապահովվի առանձին բնակարանով կամ տնով։ Մի խոսքով, պետք է լիովին իրագործվի էկոնոմիկայի սոցիալական վերակողմնորոշման՝ ՍՄԿԿ XXVII համագումարի մշակած գիծը։ «Հարկավոր է,— կարդում ենք կոնֆերանսի բանաձևում,— խիստ ուժեղացնել մարդկանց շահագրգռությունը ամենաբարձր վերջնական արդյունքներով, մինչև վերջ հաղթահարել հավասարարությունը, ավելի համարձակորեն և ամենուրեք առաջնորդվել աշխատանքն ըստ քանակի և հատկապես ըստ որակի վարձատրելու սկզբունքով, թույլ չտալ այնպիսի դրություն, երբ կարելի է անկարիք ապրել վատ աշխատանքի դեպքում»[4]։

Վերակառուցումը, սոցիալիզմի նորացումն անհրաժեշտ են առանց հասարակության մտավոր, հոգևոր պոտենցիալի ըստ ամենայնի ակտիվացման։ Կուսակցական համաժողովը պատշաճ ուշադրություն նվիրեց գիտության, կրթության և մշակույթի հետագա զարգացման հարցերին։ Մասնավորապես խոր վերակառուցում պետք է տեղի ունենա հասարակական գիտություններում, մինչև վերջ հաղթահարվի դոգմատիզմը և խղումը կյանքից։ Մեր հասարակագետները պարտավոր են ստեղծագործաբար մշակել սոցիալիզմի զարգացման թե՛ այժմեական և թե հեռանկարային հարցերը, լուսաբանել մեր հասարակության և կուսակցության ճշմարտացի պատմությունը, որը խեղաթյուրվել է անհատի պաշտամունքի և լճացման ժամանակներում։

Վերակառուցումը, երկրում կատարվող արմատական փոփոխությունները շոշափում են նաև արտաքին հարաբերությունները։ Այս բնագավառում ևս պահանջվում էին նոր մոտեցումներ։ Բանն այն է, որ վարչահրամայական մեթոդները չէին շրջանցել նաև արտաքին քաղաքական բնագավառը։ Լինում էին դեպքեր, երբ կարևորագույն որոշումներն ընդունվում էին առանց կոլեկտիվ, համակողմանի քննարկման, առանց մեր բարեկամների հետ խորհուրդ անելու[5]։ Միշտ չէ, որ կշռադատվում էր, թե ինչի կարող է հասցնել այս կամ այն գործողությունը միջազգային ասպարեզում։ Կարևոր նշանակություն ունեցավ ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի ռազմաստրատեգիական զուգակշռության ձեռքբերումը։ Սակայն, ինչպես ընդգծվեց կոնֆերանսում, «մենք իմպերիալիզմին հակազդելու ռազմական կողմի վրա կենտրոնացնելով հսկայական միջոցներ և ուշադրություն, միշտ չէ, որ պետության անվտանգության ապահովման, լարվածության մեղմացման և ժողովուրդների փոխըմբռնման համար օգտագործում էինք այն քաղաքական հնարավորությունները, որ բացվել էին աշխարհում կատարվող փոփոխությունների կապակցությամբ։

Հետևանքը եղավ այն, որ թույլ տվեցինք ներքաշել մեզ սպառազինությունների մրցավազքի մեջ, ինչը չէր կարող չանդրադառնալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և նրա միջազգային դրության վրա։ Այնինչ սպառազինությունների մրցավազքը մոտենում էր կրիտիկական նիշին։ Այդ ֆոնի վրա խաղաղության և զինաթափման օգտին մեր ավանդական քաղաքական ու հասարակական գործունեությունը սկսեց կորցնել իր համոզչությունը։ Իսկ

---

4 Նույն տեղում, 6. VII. 1988։

5 Նույն տեղում, 28. VI. 1988։

եթե ավելի սուր ասենք՝ չբեկելով նման զարգացման տրամաբանությունը, կարելի էր իրոք հայտնվել ռազմական առճակատման եզրին»[6]։

Նման պայմաններում պահանջվում էր ոչ թե պարզապես կատարելագործել, այլ վճռականապես նորացնել արտաքին քաղաքականությունը։ Այս ասպարեզում ևս անհրաժեշտ էր ցուցաբերել քաղաքական նոր մտածողություն, որի հիմքերը դրվեցին ՍՄԿԿ Կենտկոմի ապրիլյան (1985) պլենումի և սուսակցության XXVII համագումարի կողմից։

Նոր պայմաններում Սովետական Միությունը հանդես եկավ մի ամբողջ շարք խոշոր նախաձեռնություններով, որոնք լայն արձագանք գտան աշխարհում և պաշտպանվում են շատ երկրների ու կազմակերպությունների կողմից։ Օրեք տարվա աշխատանքի գլխավոր արդյունքն այն է, որ հաջողվել է հեռացնել պատերազմի վտանգը։ Այդ են վկայում հետևյալ իրողությունները. միջազգային կյանքի առանցքն առճակատումից տեղաշարժվում է դեպի համագործակցություն, փոխըմբռնում, դեպի բանակցություններ։ Բարելավվել են սովետա-ամերիկյան հարաբերությունները։ ՍՍՀՄ-ը և ԱՄՆ-ը պայմանագիր են ստորագրել միջին և փոքր հեռահարության հրթիռների վերացման մասին, աշխուժացել է համաեվրոպական պրոցեսը։ Ռեգիոնալ կոնֆլիկտների քաղաքական կարգավորման գործում կարևոր ուղենիշ դարձան Ժնևի համաձայնագրերը և Աֆղանստանից Սովետական Միության սահմանափակ զորախմբի սկսված դուրսբերումը։

XIX համամիութենական կոնֆերանսը, հավանություն տալով ՍՄԿԿ Կենտկոմի միջազգային քաղաքականությանը, վերստին ընդգծեց, որ Սովետական Միությունը այսուհետև ևս կվարի խաղաղության ու սոցիալական առաջադիմության, ազատության ու դեմոկրատիայի համար կոմունիստական ու բանվորական կուսակցությունների, հասարակական բոլոր ուժերի պայքարի հետ համերաշխության կուրս։ «Մեր պրակտիկ միջազգային գործունեության մեջ,— կոնֆերանսում ասաց Մ. Ս. Գորբաչովը,— մենք այսուհետև էլ կայուն խաղաղության ու միջազգային համագործակցության ուղիներ կորոնենք։ Մեզ համար այսուհետև էլ առաջին պլանում կլինեն մեր և սոցիալիստական երկրների հարաբերությունները։ Մենք հետևողականորեն կվարենք զարգացող պետությունների, չմիանալու շարժման հետ մեր հարաբերությունների խորացման գիծը։ Ակտիվ երկխոսություն ու բանակցություններ կանցկացնենք իրենց երկրներում իշխանությամբ օժտված պետական գործիչների հետ նախ և առաջ համաշխարհային քաղաքականության գլխավոր ուղղությունում՝ զինաթափման հարցերում»[7]։

ՍՄԿԿ XIX կոնֆերանսը հանգամանորեն քննարկեց սովետական հասարակության քաղաքական կյանքի արմատական դեմոկրատացման, քաղաքական սիստեմի ռեֆորմի ծրագիրը։ Դա վերակառուցման անշրջելիության կարևորագույն երաշխիքն է։ Հարց է ծագում, թե ինչո՞ւ է անհրաժեշտ քաղաքական սիստեմի ռեֆորմը։

Հայտնի է, որ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո մեր երկրում ստեղծվեց քաղաքական նոր սիստեմ։ Սակայն մեր զարգացման որոշակի փուլում այն լուրջ ձևախեղումների ենթարկվեց։ Դա էլ հնարավոր դարձրին թե՛ Ստալինի ու նրա շրջապատի անսահման իշխանությունը և թե՛ բռնություններն ու ապօրինությունները։ Կառավարման վարչահրամայական եղանակները կործանարար ազդեցություն գործեցին մեր հասարակության զարգացման վրա։ Ճիշտ է, ՍՄԿԿ XX համագումարի որոշումները հնարավորություն ստեղծեցին լենինյան սկզբունքների խախտումները հաղթահարելու համար, բայց դրանք ինչպես հարկն է չօգտագործվեցին։ Մեր հասարակության տնտեսական ու սոցիալական կյանքում առաջացան լճացման երևույթներ։ Մեծապես աճեց կառավարչական ապարատը։ Հաշվվում էին մոտ հարյուր միու-

6 Նույն տեղում։
7 Նույն տեղում։

թենական և ութ հարյուր հանրապետական մինիստրություններ ու գերատեսչություններ։ Այդ հսկայական ապարատն էլ սկսել էր իր կամքը թելադրել տնտեսությանը և քաղաքականությանը։ Քաղաքական համակարգի լուրջ թերություններից մեկն էլ հասարակական կյանքի չափազանց մեծ կենտրոնացումն ու պետականացումն էր։ Գործող քաղաքական համակարգը տասնամյակներ շարունակ հարմարեցվում էր գլխավորապես կամայական կարգադրությունների ու ցուցումների կատարմանը։

Այս ամենը ծանր հետևանքներ ունեցավ։ Աշխատավոր զանգվածների մեջ առաջացավ անտարբերություն, թուլացավ նրանց սոցիալական ակտիվությունը, տեղի ունեցավ հանրային սեփականությունից և կառավարումից աշխատավոր մարդու օտարում։

Հասկանալի է, որ այս վիճակն այլևս շարունակել հնարավոր չէր։ Սկսած 1985 թ. կուսակցությունը վճռական քայլեր կատարեց հասարակական-քաղաքական կառուցվածքի նորացման համար։ Սակայն, ինչպես նշվեց կոնֆերանսում, դեմոկրատացման պրոցեսները թե՛ կենտրոնում և թե տեղերում դանդաղ են զարգանում։ Մի բան պարզ է· եթե քաղաքական սիստեմը մնա առանց փոփոխությունների, վերակառուցման խնդիրները լուծել չենք կարող։ Ահա թե ինչու հարկավոր է քաղաքական սիստեմի ռեֆորմ։ Սկզբից նշենք, որ ռեֆորմը պետք է ընդգրկի քաղաքական սիստեմի բոլոր օղակները և իրականացվի հնարավորին կարճ ժամկետում։ Այժմ տեսնենք, թե կոնկրետ ինչպես պետք է իրագործվի քաղաքական սիստեմի ռեֆորմը։

Ռեֆորմի վճռական ուղղությունը ժողովրդական դեպուտատների սովետների լիիշխանության ապահովումն է. «Պետական, տնտեսական կամ սոցիալական ոչ մի հարց չի կարող լուծվել առանց սովետների։ Կուսակցության տնտեսական, սոցիալական, ազգային քաղաքականությունը պետք է վարվի նախ և առաջ ժողովրդական դեպուտատների սովետների՝ որպես ժողովրդապետության մարմինների միջոցով»[8]։ Նախատեսվում են հետևյալ միջոցառումները. սովետների լիակատար պատասխանատվություն և ինքնուրույնություն սահմանել ենթակա տարածքի զարգացման պրոբլեմների լուծման գործում, նորացնել դրանց աշխատանքի բուն կազմակերպումը, ընդլայնել բացառապես նստաշրջաններում լուծվող հարցերի շրջանակը, դեպուտատների մի մասին ազատել իրենց հիմնական պարտականություններից՝ սովետներում և ընտրական օկրուգներում աշխատելու համար։ Տեղական սովետների գործկոմների անդամները, բաժինների ու վարչությունների ղեկավարները, պետական արբիտրները և դատախազները չեն կարող մտնել համապատասխան սովետի դեպուտատների կազմի մեջ։ Այս սկզբունքը պետք է տարածել նաև ՍՍՀՄ-ի, հանրապետությունների կառավարությունների անդամների և գերատեսչությունների ղեկավարների վրա։ Սովետներում ընտրովի պաշտոններ զբաղեցնելը սահմանափակվում է անընդմեջ երկու ժամկետով։

Սովետների հեղինակության վերականգնման համար անհրաժեշտ է էականորեն նորացնել ընտրական համակարգը։ Մասնավորապես նախատեսվում է թեկնածուների անսահմանափակ առաջադրումը, ընտրական թերթիկներում ավելի շատ թեկնածուներ ընդգրկելը, քան մանդատներն են, դեպուտատների կանոնավոր հաշվետու լինելը և նրանց հետ կանչելու հնարավորությունը։ Ըստ որում, ժողովրդական դեպուտատների սովետների համար սահմանվում է լիազորությունների միասնական ժամկետ՝ 5 տարի։

Կոնֆերանսն անհրաժեշտ համարեց վերակազմել պետական իշխանության բարձրագույն մարմինները։ Երկրի իշխանության բարձրագույն մարմին պետք է դառնա ՍՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարը։ Իր ամենամյա հրավիրվող նիստերում համագումարը կարող է լուծել սահմանադրական, քաղաքական ու սոցիալ-տնտեսական ամենակարևոր հարցերը, կազմել ՍՍՀՄ երկպալատ Գերագույն սովետ՝ որպես մշտապես աշխատող օրենս-

8 Նույն տեղում։

դիր, կարգադիր, վերահսկիչ մարմին։ Համագումարը գաղտնի քվեարկությամբ ընտրում է Գերագույն սովետի նախագահ։

Քաղաքական սիստեմի ռեֆորմի կարևոր ուղղություններից մեկը կառավարման ապակենտրոնացումն է այն հաշվով, որ ապահովվի տեղերի առավելագույն նախաձեռնությունն ու ինքնուրույնությունը։ Այդ նպատակով պետք է պարզեցնել պետական ապարատի կառուցվածքը, կատարելագործել նրա աշխատանքի մեթոդները, վերացնել ավելորդ օղակները, կրճատել նրա թվակազմը մինչև նպատակահարմար սահման։

Սկզբունքային կարևորություն ունեցող գործ է սոցիալիստական իրավական պետության՝ որպես սոցիալիզմին լիովին համապատասխանող քաղաքական իշխանության կազմակերպման ձևի ստեղծումը։ Նախատեսվում է համեմատաբար կարճ ժամկետում անցկացնել նաև իրավական ռեֆորմ, որի էությունն իրավապահ մարմինների գործունեության արմատական վերակառուցումն է։

Քաղաքական սիստեմի ռեֆորմի հետ կապված անհրաժեշտ է դեմոկրատացնել նաև հասարակական կազմակերպությունների կյանքը, բարձրացնել նրանց ինքնուրույնությունն ու պատասխանատվությունը, վճռականորեն հաղթահարել կազմակերպամոլությունը, ձևամոլությունը նրանց աշխատանքում։

ՍՍՀՄ-ը բազմազգ երկիր է, ուր կողք-կողքի ապրում և աշխատում են 100-ից ավելի ազգեր ու ազգություններ։ Բնականաբար, ազգամիջյան հարաբերություններին վերաբերող հարցերը բացառիկ նշանակություն ունեն մեր երկրի բախտի համար։ Ելնելով այդ իրողությունից, կուսակցական կոնֆերանսը սկզբում ուշադրություն դարձրեց հսկայական կարևորություն ունեցող այդ հարցին։ Կոնֆերանսն ընդունեց հատուկ բանաձև «Ազգամիջյան հարաբերությունների մասին», որում կոնկրետացվում են կուսակցության խնդիրներն ազգային հարաբերությունների բնագավառում։

Հայտնի է, որ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո զգալի գործ է կատարվել ազգային հարաբերությունների բնագավառում եղած պրոբլեմների լուծման ուղղությամբ։ Մեծացել է բոլոր հանրապետությունների տնտեսական, մշակութային և կադրային պոտենցիալը։ Իրողություն է դարձել պատմական նոր ընդհանրությունը՝ սովետական ժողովուրդը։ Տեղի է ունենում ազգային ինքնագիտակցության օրինաչափ աճ։ Իրա հետ միասին, ինչպես նշվեց կոնֆերանսում, պետք է տեսնել իրական պատկերը՝ թե՛ անվիճելի նվաճումները և թե ակնհայտ թերամշակումները, վրիպումներն ու դժվարությունները, սխալները։ Սովետների բազմազգ պետության կազմավորման նախնական փուլին բնորոշ դինամիզմն էապես խախտվեց ազգային քաղաքականության լենինյան սկզբունքներից կատարված նահանջով, անհատի պաշտամունքի ժամանակաշրջանում օրինականության խախտումներով, լճացման գաղափարախոսությամբ ու հոգեբանությամբ։ Բացարձակացվում էին ազգային հարցի լուծման գործում ձեռք բերված արդյունքները, տարածում էին գտել ազգային հարաբերությունների անպրոբլեմայնության վերաբերյալ պատկերացումները։ Անբավարար էին հաշվի առնվում, ինչպես առանձին հանրապետությունների և ինքնավար կազմավորումների, այնպես էլ ազգային խմբերի սոցիալ-տնտեսական, մշակութային, լեզվական, էթնիկական զարգացման պահանջմունքները։ Ժամանակին չէին լուծվում ոչ քիչ թվով հարցեր, որոնք առաջադրվում էին ազգերի ու ազգությունների զարգացման բուն ընթացքով։ «Տասնամյակների ընթացքում կուտակված բացասական երևույթները երկար ժամանակ անտեսվում էին, քողարկվում, կուսակցական պատշաճ գնահատական չէին ստանում»[9]։ XIX կուսակցական կոնֆերանսը պատմական կարևորություն ունեցող խնդիր համարեց հաստատակամորեն հաստատել և ստեղծագործաբար զարգացնել ազգային քաղաքականության

---

9 Նույն տեղում, 6. VII. 1988։

լենինյան նորմերն ու սկզբունքները, դրանք վճռականորեն մաքրել արհեստական նստվածաշերտերից ու խեղումներից։

Կոնֆերանսն առաջադրեց դեմոկրատական սկզբունքների հիման վրա սովետական ֆեդերացիայի հետագա զարգացման ու ամրապնդման կոմպլեքս միջոցառումներ։ Ընդլայնվում են միութենական հանրապետությունների և ինքնավար կազմավորումների իրավունքները, պայմաններ են ստեղծվում էկոնոմիկայի, սոցիալական և կուլտուրական զարգացման, բնության պահպանման ոլորտում դրանց ինքնուրույնությունն ու պատասխանատվությունն ուժեղացնելու համար։ Արմատական տնտեսական ռեֆորմը, դեմոկրատացման պրոցեսը լայն ասպարեզ են բացում ինչպես ազգային պետական կազմավորումների, այնպես էլ ամբողջությամբ վերցրած երկրի շահերի առավել նպատակահարմար զուգակցման համար։

Խնդիր է դրվել ակտիվացնել քաղաքական սիստեմի այն հաստատությունները, որոնց միջոցով պետք է համաձայնեցվեն ազգային շահերը։ Այս առնչությամբ պետք է բարձրացվի սովետների, նախ և առաջ ՍՍՀՄ Գերագույն սովետի Ազգությունների սովետի, նրա մշտական հանձնաժողովների և ՍՍՀՄ կառավարության դերը։ ՍՍՀՄ, միութենական և ինքնավար հանրապետությունների գերագույն սովետներում անհրաժեշտ է ստեղծել ազգամիջյան հարաբերությունների հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովներ։

«Ազգամիջյան հարաբերությունների մասին» բանաձևի կետերից մեկը վերաբերում է ազգային մշակույթին։ Կարևոր է, որ յուրաքանչյուր ազգային ռեգիոնում տնտեսական ու սոցիալական առաջընթացն ուղեկցվի հոգևոր առաջադիմությամբ՝ ազգերի ու ազգությունների մշակութային ինքնատիպության հենքի վրա։ Մեր բազմազգ պետության կարևորագույն սկզբունքն է մայրենի լեզուների ազատ զարգացումն ու իրավահավասար օգտագործումը ՍՍՀՄ բոլոր քաղաքացիների կողմից, ռուսաց լեզվին տիրապետելը։ Հարկավոր է բոլոր պայմանները ստեղծել, որպեսզի ազգային-ռուսերեն երկլեզվությունը դարձնա ոչ թե ձևականորեն, այլ ներդաշնակորեն ու բնականորեն։ Պետք է հոգ տանել պետական, հասարակական ու մշակութային կյանքի տարբեր ոլորտներում ազգային լեզուների ակտիվ գործածման համար։

Կոնֆերանսը պաշտպանեց ազգային հարաբերությունների հարցերի շուրջ ՍՄԿԿ Կենտկոմի պլենում անցկացնելու առաջարկությունը։ «ՍՍՀՄ-ը, —կոնֆերանսում ասաց Մ. Ս. Գորբաչովը,— մեր ընդհանուր տունն է։ Եվ մենք՝ այդ տան տերերս, պարտավոր ենք մշտապես հոգալ նրա մասին, պահպանել ու բարեկարգել, ջանալ գործն այնպես վարել, որ բոլոր սովետական մարդիկ, ապրելով այդ տանը, հպարտություն զգան իրենց սոցիալիստական հայրենիքի համար»[10]։

Կոնֆերանսի ուշադրության կենտրոնում էր կուսակցության, որպես սովետական հասարակության քաղաքական ավանգարդի դերի հարցը։ Ինչպե՞ս է դրսևորվում կուսակցության ղեկավար դերը։ Կուսակցությունը, հենվելով մարքս-լենինյան ուսմունքի վրա, մշակում է երկրի զարգացման կարևորագույն հարցերը, վերակառուցման գաղափարախոսությունը, սահմանում մեր հասարակության առաջընթացի ճիշտ ուղղությունը։ Կուսակցությունն իրագործում է կադրային քաղաքականությունը, կազմակերպական հետևողական աշխատանք կատարում աշխատավորական մասսաների շրջանում՝ առաջադրված կանխագծումները կյանքի կոչելու նպատակով։

Ի՞նչ անել, որպեսզի կուսակցությունը հաջողությամբ կատարի իր ղեկավար դերը, ինչպե՞ս վարվել, որպեսզի բացառվի այնպիսի բանի կրկնությունը, ինչը կապված է անհատի պաշտամունքի և լճացման ժամանակաշրջանների հետ։ Առաջին հերթին կուսակցության գործունեության մեջ պետք է անդառնալիորեն անցյալի գիրկն անցնեն հրամանատարական-հրամայական մեթոդները։ Կուսակցության քաղաքականությունը պետք է բացառապես

10 Նույն տեղում, 29. VI. 1988։

իրականացվի կազմակերպական, կադրային, գաղափարախոսական աշխատանքի միջոցով՝ պահպանելով օրենքներն ու հասարակական կյանքի դեմոկրատական սկզբունքները։ Կուսակցական կազմակերպությունները և դրանց կոմիտեները վճռականապես պետք է հրաժարվեն պետական ու տնտեսական մարմիններին փոխարինելուց, հասարակական կազմակերպություններին ու ստեղծագործական միություններին թելադրելուց։ Կոնֆերանսը զորձուն միջոցներ նշեց կուսակցական և պետական մարմինների ֆունկցիաների սահմանազատման համար։ Այդ հարցի ճիշտ լուծումից է, ըստ էության, կախված թե՛ մեր քաղաքական սիստեմի վերակառուցումը, թե՛ վերակառուցումը ընդհանրապես։ Ոմանք երկյուղ են հայտնում, թե նման պայմաններում կուսակցության ղեկավար դերը կարող է թուլանալ։ Հիմք ունե՞ն արդյոք նման պրնդումները։ Ամենևին։ Ինչպես նշվեց կոնֆերանսում, կուսակցությունը մնալով որպես կառավարող, բոլոր անհրաժեշտ լծակներն ունի իր ղեկավար դերն իրականացնելու համար։ Դրանցից գլխավորն են 20 միլիոն կոմունիստները, որոնց միջոցով կուսակցությունը կոչված է իրականացնելու իր քաղաքական կուրսը մեր կյանքի բոլոր ոլորտներում։

Կուսակցությունը պետք է վերակառուցի իր գործունեությունը, աշխատանքի ոճը, մեթոդները և ձևերը։ Դա վերաբերում է բոլոր կազմակերպություններին՝ սկզբնականից մինչև Կենտրոնական կոմիտե։ Կոնֆերանսում ընդունված որոշումները նպատակամղված են դրան։ Նախատեսվում է լիովին վերածնել ներկուսակցական դեմոկրատիան, բարձրացնել սկզբնական կուսակցական կազմակերպությունների ինքնուրույնությունը, լիովին վերականգնել որոշումների կոլեգիալ քննարկման և ընդունման լենինյան սկզբունքը, բարձրացնել ընտրովի մարմինների դերը, ակտիվացնել ՍՄԿԿ Կենտկոմի և քաղբյուրոյի գործունեությունը, ապահովել բանավեճերի ազատություն հարցերի քննարկման փուլում և գործողությունների միասնություն՝ մեծամասնության կողմից որոշումների ընդունումից հետո։

Այժմ, երբ խնդիր է դրվում նորացնել ներկուսակցական հարաբերությունները, առաջնահերթ նշանակություն է ստանում ընտրական պրոցեսի դեմոկրատացումը կուսակցության մեջ։ Կուսակցական բոլոր կոմիտեների, ընդհուպ մինչև ՍՄԿԿ Կենտկոմի անդամների ու քարտուղարների ընտրության ժամանակ պետք է ապահովվի թեկնածությունների լայն քննարկումը և գաղտնի քվեարկությունը, մանդատներից ավելի թեկնածուներ առաջադրելու հնարավորությունը։ Կուսակցական բոլոր մարմինների համար սահմանվում է լիազորությունների միասնական ժամկետ՝ հինգ տարի։

Կուսակցության կադրային կազմի լճացման դեմ կարևորագույն երաշխիք դառնա ընտրովի պաշտոններում գտնվելու ժամկետների սահմանափակումը։ Կուսակցական բոլոր կոմիտեների և բյուրոների անդամներն ու քարտուղարները, այդ թվում նաև ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամներն ու ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղարը, կարող են նույն պաշտոնում ընտրվել անընդմեջ երկու ժամկետից ոչ ավելի։

Կուսակցության մեջ վերահսկիչ-վերստուգիչ աշխատանքը կատարելագործելու, սուբյեկտիվիզմի, կամայականության դեմ հուսալի երաշխիքներ ապահովելու նպատակով կոնֆերանսը որոշեց ստեղծել միասնական վերահսկիչ մարմին՝ ՍՄԿԿ կենտրոնական վերահսկիչ-վերստուգիչ հանձնաժողով։ Համապատասխան մարմիններ կստեղծվեն նաև տեղերում։

Մենք անդրադարձանք ՍՄԿԿ XIX համամիութենական կոնֆերանսի հիմնական որոշումներին։ Դրանք պատմական նշանակություն ունեն երկրի ճակատագրի համար։ Կոնֆերանսը փուլային ուղենիշ կմնա վերակառուցման գործում։ «Կուսակցությունը,— կարդում ենք կոնֆերանսի բանաձևում,— հաստատակամորեն ու նպատակամետորեն կխորացնի հեղափոխական վերակառուցման պրոցեսը, կապահովի վերակառուցման անշրջելիությունը, ամեն ինչ կանի նրա նպատակներին հասնելու համար»[11]։

11 Նույն տեղում, 6. VII. 1988։

XIX ВСЕСОЮЗНАЯ КОНФЕРЕНЦИЯ КПСС

Г. М. АЙВАЗЯН

Резюме

XIX всесоюзная конференция КПСС—важная веха в жизни партии и советского народа. В решениях конференции охвачен весь комплекс проблем, стоящих перед партией и страной.

Главный итог конференции состоит в том, что по всем коренным вопросам выработана программная политическая позиция. Основным вопросом, вынесенным на рассмотрение конференции, стала всеохватывающая демократизация жизни нашего общества.

В центре внимания партийного форума встал вопрос о новой роли партии как политического авангарда общества.